

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0010 Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարության տուն 2
Հեռ. +37410544041202, Ֆաքս. +37410565601, էլ. փոստ. press@mfa.am

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

343-11-08-2008

ՀՀ ԱԳՆ ստորաբաժանումները շարունակում են աշխատանքները
ՀՀ քաղաքացիներին Վրաստանից հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

Ս.թ. օգոստոսի 11-ի ժամը 10:00-ի դրությամբ կազմակերպվել է Հայաստանի
Հանրապետության մոտ 7500 քաղաքացիների վերադարձը հայրենիք:

Հայաստանյան համապատասխան կառույցների աջակցությամբ
դյուրացված կարգով Հայաստան են մուտք գործել օտարերկյա շուրջ 2000
քաղաքացիներ, այդ թվում՝ Վրաստանում հավատարմագրված դիվանագետներ,
միջազգային կազմակերպությունների աշխատակիցներ եւ նրանց ընտանիքների
անդամներ:

Օգոստոսի 11-ի ժամը 11:00-ի դրությամբ Վրաստանում տեղի ունեցող
իրադարձությունների ընթացքում Հայաստանի քաղաքացիներ չեն տուժել:

Երրորդ օրն է, ինչ Հայաստանի ԱԳՆ-ում գործում են շուրջօրյա
հերթապահության թեժ գծեր, որոնցով ստացվում են հազարավոր զանգեր
Հայաստանից եւ արտերկրից: -0-